# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2021 թվականի N 206

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-035-0074-0002 ծածկագրի, հանգուցյալ Արտավազդ Պետրոսի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող 0,24 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրվել է 58-րդ փողոց 1 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15-ին

գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2021 թվականի N 207

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀՄԴ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարաման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի N61-Ն որոշման հավելված 1-ի բ ենթակետով, հիմք ընդունելով <<Հայաստանի մանուկներ>> բարեգործական հիմնադրամ ՀՄԴ դիմումը՝

**Որոշում եմ**

1. ,Հայաստանի մանուկներե բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ին, Դսեղ համայնքի 5փ. 65 հողամաս հասցեում առողջության կենտրոնի Ա (385քմ) և Բ(95քմ) մասնաշենքեր կառուցելու նպատակով տալ շինարարության թույլտվություն:

2. «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ին, ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքապետարանի 900265129289 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարական թույլտվության համար:

3. «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ն պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15-ին

գ. Դսեղ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2021 թվականի N 208

### ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ կետերով, 43-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-հոդվածի 11-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29,12,2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հիմք ընդունելով համայնքի ավագանու 17.11□2021 թվականի թիվ 60 որոշումը և Արսեն Կարենի Խառատյանի հայտը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 Արսեն Կարենի Խառատյանին Դսեղ համայնքի վարչական տարածքում սեփականության իրավունքով պատկանող 06-035-0200-0014 ծածկագրով 0,086142 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության նպատակային այլ հողատեսքը, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվելու համար փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2, 06-035-0200-0014 ծածկագրով 0,086142 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրված հողամասին տրամադրել Դսեղ համայնք 60-րդ փողոց 5 հողամաս փոստային հասցեն:

3, Հաստատել 06-035-0200-0014 ծածկագրով 0,086142 հա հողամասում գյուղատնտեսական մթերքների վերամշակման նպատակով կառուցվող շինության նախագծման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը և տրամադրել հողամասի սեփականատիրոջը նախագծման աշխատանքները սկսելու համար:

4,Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել Դսեղ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ. նոյեմբերի 17-ին

գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2021 թվականի N 209

**ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՌՆԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-035-0030-0020 ԾԱԾԿԱԳՐԻ 0,002 ՀԱ ԵՎ 06-035-0030-0011 ԾԱԾԿԱԳՐԻ 0,0020 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, **ՀՀ կառավարության 2011թ.դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՀ կառավարության** 02 ապրիլի 2015 թվականի N 412-Ն որոշումներով, հաշվի առնելով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովի 16.11.2021 թվականի թիվ 236 դրական եզրակացությունը և համայնքի ավագանու 17.11.2021թ. թիվ 63 որոշումը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Գառնիկ Անդրանիկի Հովսեփյանին վարձակալության (կառուցապատման) իրավունքով 06-035-0030-0020 ծածկագրի 0,002 հա 06-035-0030-0011 կադաստրային ծածկագրի 0,0020 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

4. 06-035-0030-0011 կադաստրային ծածկագրի 0,0020 հա հողամասին տրամադրել 5փողոց 1/5 հողամաս:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՌՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ հոտեմբերի 17-ին
գ. Դսեղ